14.08.2020թ. ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ թիվ 430478/19

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա.Մնացականյանս, քննելով 14.08.2020 թվականի վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ26132 գործը,

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության 07.04.2020թ. թիվ 4122989 ակտի Ա/Ձ Սամվել Խաչատրյանը (ՀՎՀՀ՝ 40570841, հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, Չարենցավան, 8թղմ., 7, 9) հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացվող դրամական միջոցների հաշվառումը վարել է այնպիսի խախտումով, որը կարող է առաջացնել հարկի նվազեցում:

Նկարագրված արարքի համար պատասխանատվություն է նախատեսված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 1-ին մասով:

Կողմը՝ ծանուցված լինելով արձանագրության կազմման, գործի քննության վայրի և ժամանակի մասին չի ներկայացել: Գործում առարկություն կամ բացատրություն առկա չէ:

Այն փաստը, որ Սամվել Խաչատրյանը մեկ տարվա ընթացքում չի կատարել իրավախախտում, սույն գործով դիտվում է պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 33-րդ, 244[2], 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով

ՈՐՈՇԵՑԻ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 1-ին մասի՝ Սամվել Խաչատրյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նշանակել տուգանք 15.000 (տասնհինգ հազար) դրամի չափով:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ГОСУДАРСТВЕННЫЙ КОМИТЕТ ДОХОДОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
STATE REVENUE COMMITTEE OF THE REPUBLIC OF ARMENIA

Ծանոթություն.Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն

Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40): Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի դրոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումն հանձնելու օրվանից հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավազոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում: Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելո ւմասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում (հոդված 305, մաս 1) գանձապետական հետևյալ հաշվեհամարին. **900005240487՝** վճարման անդորրագրի <<**նպատակ**>> դաշտում պարտադիր նշելով որոշման համարը:

Տուգանք ընշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը նշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո 15 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում այն ենթակա է բռնագանձման օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ստացա որոշման պատճենը_____